



Գալուստ Կիւլպէնկեան Զիմնարկութիւն. 49 Սփիւռքահայ ուսուցիչներ արժանացան Զայերէնով դասաւանդողներու առցանց ուսուցումի մրցանակին

Գալուստ Կիւլպէնկեան Զիմնարկութեան Զայկական Զամայնքներու Բաժանմունքը Սփիւռքի ուսուցիչներուն ուղղուած մրցանակ մը յայտարարեց Ապրիլ 2020-ին:

«Զայերէնով դասաւանդողներու առցանց ուսուցումի մրցանակ»-ին նպատակն էր քաջալերել Պսակածել ժահրին պարտադրած ինքնամեկուսացումին պատճառաւ առցանց հարթակներ տեղափոխուած կրթական ընթացքին մէջ հայերէնով իրենց ներդրումը ունեցող ուսուցիչներուն անհատական աշխատանքները:

Ուսուցիչները պետք է դիմէին ներկայացնելով իրենց պատրաստած սիւլաբը, իրենց աշակերտներուն հետ ունեցած հաղորդակցութեան օրինակները, եւ իրենց օգտագործած առցանց հարթակին վրայ իրականացուած ուսուցողական տուեալ աշխատանքին ընթացքն ու նպատակակետերը բացատրող գրութիւն մը:

Մրցանակը դիմումներ ընդունեց վեց շաբթուան ընթացքին: Դիմումներուն արժեւորումի աշխատանքները կատարուեցան երկշաբթեայ դրութեամբ, եօթը հոգիէ բաղկացած յանձնախումբի մը կողմէ, եւ նկատի ունենալով հետեւեալ չափանիշերը.-

- Առցանց համակարգերու գործածութեան մէջ առաջարկուած նորարար մօտեցումները:
- Մանկավարժական մեթոդաբանութեան կիրարկելիութիւնը եւ ճկունութիւնը:
- Աշակերտներուն մասնակցութիւնը եւ անոնց համար «հաճելի»-ի ազդակը:
- Գործադրութեան եւ հայերէնի գործածութեան որակը:
- Ուրիշներուն կողմէ ծրագիրին գործածելիութեան հեռանկարը:

Այս վեց շաբթներուն ընթացքին, Զիմնարկութիւնը 13 երկիրներէ 106 դիմումներ ստացաւ՝ ամենօրեայ եւ շաբթօրեայ հայկական դպրոցներու մէջ աշխատող ուսուցիչներէ: Դիմողներուն մեծամասնութիւնը հայոց լեզուի դասատուներ էին, բայց մրցանակը սահմանափակուած չէր իրենցմով: Պատմութեան, կրօնի, թուաբանութեան, գիտութեան, արուեստի եւ նոյնիսկ մարզանքի ուսուցիչներ դիմեցին իրենց տարբեր բնոյթի աշխատանքներով՝ անոնցմէ իւրաքանչիւրը բացայայտելով իր եւ իր աշակերտներուն ունեցած փորձառութիւնը հեռավար ուսումնառութեան աշխարհին մէջ: Դիմողներուն միջին տարիքը 44-ն էր:



Հիմնուելով դիմողներու մեծ թիվին վրայ եւ հնարաւորին չափ շատ ուսուցիչներ քաջալերելու նպատակով, նախապէս յայտարարուած 30 մրցանակին փոխարէն Հիմնարկութիւնը տրամադրեց 500 ԱՄՆ տոլար արժողութեամբ 49 նպաստ, քաջալերելով դիմողներուն 46 %-ը:

«Դժբախտաբար չէինք կրնար մրցանակ տրամադրել բոլոր մասնակիցներուն, այնուամենայնիւ կը գնահատենք բոլորին ջանքերը եւ ընդհանրապէս հայերէնի դասաւանդումին դիմագրաւած մարտահրաւերներուն դիմաց անոնց կատարած մեծ աշխատանքը՝ մանաւանդ համաճարակի այս օրերուն», նշեց Հայկական Համայնքներու Բաժանմունքի տնօրէն՝ Դոկտ. Ռազմիկ Փանոսեանը:

Յաւելեալ տեղեկութիւններ կրնաք գտնել կցուած աղիւսակներուն մէջ: Մրցանակին յայտարարութիւնն ու մասնակցութեան պայմանները կարդալ [այստեղ](#):

«Հայերէնով դասաւանդողներու առցանց ուսուցումի մրցանակ»-ին 49 մրցանակակիրներն են.-

1. Աբրահամ Աբրահամեան
2. Ալինա Հաճեան
Ալիսիա Ներկիզեան (խմբային դիմում)
3. Ալիք Արզումանեան
4. Անահիտ Հովհաննիսյան
5. Անի Մալճեան Կեօքկեօզեան
6. Անի Չափարեան Մոսկոֆեան
7. Անի Պիլալեան
8. Անի Գարասապան
9. Ատրինէ Մալխասեան
10. Արտեմիս Մկրտիչեան
11. Գայանէ Էրզրումյան
12. Գարին Աքալ
13. Գոհար Մանճեան
14. Գոհար Սաֆարեան
Գարինա Սիլվիա Պալեան (խմբային դիմում)
15. Լենա Գոյումճեան Արապօղլեան
16. Լեռնա Գարագիւթիւք
17. Լիզա Ճիկերեան Մանոյեան
18. Լիւսի Տեօքմէճեան
19. Ծովինար Կիւմիւշեան Պոյաճեան
20. Հայկանուշ Մինասեան
Անի Աբիկեան



- Արաքսի Միքայելեան
Անուշ Ֆենդեան (խմբային դիմում)
21. Զերա Իսքենտերոզլու
 22. Զոփիսիմե Նալպանտեան
 23. Ճորճ Արապաթեան
 24. Մանուշակ Ալեքսանեան
 25. Մարինա Դանոյան
 26. Մարո Այնթապեան
 27. Նաթալի Գերոզեան
 28. Նաթալի Պաղտատ Գոճապայ
 29. Թալին Աշիքեան
 30. Թալին Ճոճըռեան Պերեճիքեան
 31. Թամար Մանկասար
 32. Թամար Յակոբեան Եալմանեան
 33. Թամար Չափարեան Թէշիշեան
 34. Նայիրի (Նանոր) Փանոսեան Պետրոսեան
 35. Նորա Սարաֆեան Թաշճեան
 36. Շողեր Աշրզեան
 37. Պելեն Ստեփանեան
 38. Պէթի Պերպերեան
 39. Սանտրա Զամամճեան
 40. Սեւան Պողոս Տէր Պետրոսեան
 41. Սոնիա Պաղտասարեան
 42. Սօսէ Պայրամեան
 43. Սօսի Գարօղանեան Զիլինկիրեան
 44. Սօսի Կարճիքեան
 45. Վահան Սաղտըճեան
 46. Վարդուկ Ռոզ Ֆռնրզլեան
 47. Վիվիանա Պասմաճեան
 48. Յոլինէ Էլմայեան
 49. Փոլին Նազարեան Մերտիսանեան

Մեր սրտագին շնորհաւորանքները բոլոր մրցանակակիրներուն: